ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԻԲՐԱՀԻՄ ԱԼ-ՀԱԼԱԲԻԻ «MULTAQA AL-ĀBḤUR» («ԾՈՎԵՐԻ ՄԻԱՁՈՒԼՈՒՄ») ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԱՖԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԻՐԱՎԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Դ. Ա. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր

Վ. Ա. Տեր-Ղևոնդյան

պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ա. Վ. Սաֆարյան

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ**

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024թ. դեկտեմբերի 16-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ «Համաշխարհային պատմութուն» 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. նոյեմբերի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ.գ.թ., դոցենտ **Ա. Ա. Փաշայան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Իսլամական իրավունքի՝ ֆիկհի ձևավորումը վերագրվում է 7-10-րդ դարերին, սակայն դրա զարգացումը շարունակական բնույթ է կրել: Ոլորտի տեսաբանները հնարավորություն են ունեցել կատարելագործել իսլամական իրավունքի չորս ուղղությունների՝ մազհաբների տեսական-մեթոդական և կիրառական կողմերը՝ համապատասխան իսլամական պետության և հասարակության զարգացման օրինաչափությունների ու տրամաբանության: Իրավական մեթոդների կիրառման ճկունությամբ և առավել հանդուրժողականությամբ առանձնանում է հանաֆիական մազհաբը, որի հետևորդն էր 15-րդ դարի իրավագետ ու նորարար Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Իբրահիմ ալ-Հալաբին, ով իր գործունեությունը ծավալել է նախ Հալեպում, ապա Կահիրեում, իսկ կյանքի վերջին շրջափուլը՝ Ստամբուլում, որը 16-րդ դարի սկզբին իսլամական մտքի և մշակույթի զարգացման կարևորագույն կենտրոն էր: Ստամբուլում ալ-Հալաբին շփվել է ժամանակի հայտնի մտածողների հետ, իմամ-խատիբ է եղել մի շարք մզկիթներում, որոնցից առավել հայտնի էր Սուլթան Մուհամմադ ալ-Ֆաթիհը, հեղինակել է մի շարք աշխատասիրություններ, այդ թվում՝ ուղերձներ, որոնցից ամենահայտնին «Niʿmat al-ḡarīʿa fī naṣrat al-šarīʿa» է (թարգմանաբար՝ «Պատրվակի ընծան՝ շարիաթի աջակցությամբ»), որն ուղղված էր սուֆի տեսաբան Մուհի ալ-Դին իբն ալ-Արաբիի փիլիսոփայության քննադատությանը: Ալ-Հալաբին սակայն հանրահռչակվեց «Multaqa al-Ābḥur» («Ծովերի միաձուլում») հայտնի աշխատության շնորհիվ, որը ծանրակշիռ ազդեցություն է ունեցել հանաֆիական մազհաբի և ընդհանրապես իսլամական իրավունքի կայացման գործում: Իբրահիմ ալ-Հալաբիին հաջողվեց կատարելագործել ֆիկհի տեսական և գործնական կողմերը: Ալ-Հալաբին իրավամբ նորարար է. նա նոր լույսի ներքո մշակեց և համադրեց իրավունքի շատուշատ նորմեր, որոնք առնչվում էին իսլամական վարքականոնի տարբեր կողմերին և այլևայլ հարցերին: Այդ նորմերը հետագայում ներդրվեցին իսլամական հասարակության զարգացման հիմքում և ինստիտուցիոնալ նշանակություն ձեռք բերեցին: Դրանք ոչ միայն հանաֆիականության, այլև իսլամական իրավունքի ձեռքբերումներն են: Ալ-Հալաբիին հաջողվեց առաջադրել իսլամական իրավունքի տեսանկյունից մի շարք բարդ ու խրթին հարցերի լուծումներ, որոնցից շատերն ընդունելի էին ոչ միայն հանաֆիական, այլև այլ մազհաբների տեսանկյունից ևս: Հատկանշական է, որ Օսմանյան կայսրության՝ 1877թ. հրապարակված քաղաքացիական օրենսգրքի՝ Մեջելեի հիմքում «Multaqa al-Ābḥur» աշխատությունն է:

Անվիճելի է այն փաստը, որ առանց Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābḥur» աշխատության ուսումնասիրության, անհնար է հասկանալ ոչ միայն հանաֆիական մտքի զարգացման փոխակերպումները, այլև իսլամական իրավունքի զարգացման ընթացքը: Պատահական չէ, որ «Multaqa al-Ābḥur» երկը մեծ հետաքրքրություն է առաջ բերել եվրոպացի հետազոտողների շրջանում ևս: 1882 թ. ֆրանսիացի արևելագետ,

ճանապարհորդ Հենրի Սուվարեն գիրքը թարգմանել է ֆրանսերենի:

Աշխարհի տարբեր գիտական կենտրոններում պահվում են Իբրահիմ ալ-Հալաբիի ձեռագրերի օրինակներ, որոնք որոշակիորեն ուսումնասիրված են: Ուշագրավ է, որ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում, նույնպես կա վերոհիշյալ աշխատության յոթ ձեռագիր: Դրանցից մեկն էլ մեր կողմից ուսումնասիրված «Multaqa al-Ābḥur» աշխատության՝ Մատենադարանում պահվող թիվ 1713 ձեռագիրն է: Նշված ձեռագրի ուսումնասիրությունը կարելի է համարել նաև Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հանրահռչակման փորձ:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Ատենախոսության գլխավոր նպատակն է բացահայտել «Multaqa al-Ābḥur» աշխատության նշանակությունն ու ազդեցությունը մուսուլմանական իրավունքի համակարգում: Ուսումնասիրության համար ընտրվել է աշխատության՝ Մատենադարանում պահվող ձեռագիր օրինակնե-րից մեկը՝ արաբատառ ֆոնդի թիվ 1713 ձեռագիրը (գրիչ՝ Իբրահիմ իբն Սալեհ իբն Հասան): Հիշատակված ձեռագրի ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. էջերի քանակով և բովանդակությամբ այն ամբողջական և համեմատաբար դյուրընթեռնելի է: Մինչդեռ Մատենադարանում նշված աշխատության մնացած ձեռագրերը հիմնականում անավարտ են: Մեր կողմից նպատակ է դրվել նշված ձեռագիրը համեմատել արաբական երկրներից որևէ մեկում պահվող համանուն աշխատության որևէ ձեռագիր օրինակի հետ ու կատարել համեմատական վերլուծություն Մատենադարանում պահվող օրինակի հետ: Մեր ընտրությունը կանգ է առել Սաուդյան Արաբիայի Թագավորության «Թագավոր Սաուդ» համալսարանում պահվող օրինակներից թիվ 6770 ձեռագրի (հիջրայի 1133 թ., գրիչ՝ Ալի իբն Աբդուլլահ) (այսուհետ թիվ 6770 ձեռագիր) վրա: Մեր ընտրությունը պայմանավորված է մեկ այլ հանգամանքով ևս՝ «Թագավոր Սաուդ» համալսարանում պահվում են «Ծովերի միաձուլում» աշխատության ամենաշատ ձեռագիր օրինակները:

Մեր կողմից հիշատակված նպատակներն իրականացնելու համար առաջադրվել են հետևյալ ***խնդիրները***.

- Լուսաբանել իսլամական իրավական գիտելիքի զարգացման պատմությունը, դրա տեսական ու գործնական կողմերը, նաև՝ մեթոդաբանությունը, այդ համատեքստում՝ սուննիական կրոնաիրավական դպրոցների, մասնավորապես՝ հանաֆիականության ձևավորման գործընթացն ու հետագա զարգացումը:
- Հետազոտել Իբրահիմ ալ-Հալաբիի կյանքի ու գործունեության հիմնական հանգրվանները, հստակեցնել նրա դերը որպես իմամ-խատիբ՝ բացահայտելով ժամանակի օսմանյան միջավայրի թողած ազդեցությունը հանաֆի տեսաբանի աշխարհընկալման վրա:
- Հետազոտել ալ-Հալաբիի և նրա «Multaqa al-Ābḥur» աշխատության ազդեցությունն իսլամական իրավունքի, այդ թվում՝ հանաֆիականության վրա:

- Ուսումնասիրել 1877թ. Օսմանյան կայսրությունում հրապարակված քաղաքացիական օրենսգրքի՝ Մեջելլի վրա ալ-Հալաբիի «Multaqa al-Ābḥur» աշխատության ազդեցությունը:
- Քննության ենթարկել եվրոպացի հետազոտողների շրջանում «Multaqa al-Ābḥur» աշխատության նկատմամբ հետաքրքրության դրսևորումները, ներկայացնել աշխատության թարգմանությունները:
- Նոր լույսի ներքո քննարկել և համեմատություն անցկացնել թիվ 1713 և թիվ 6770 ձեռագրերի միջև:
- Լուսաբանել երկու ձեռագրի բուն տեքստերը, բովանդակության ցանկերը, հիշատակարանները և տեքստերից դուրս առկա մեկնություններն ու ծանոթագրությունները, դրանց նմանություններն ու տարբերությունները:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է գլխավորապես 15-18-րդ դարերը: Նման պարբերացման հիմք է ծառայել այն, որ «Ծովերի միաձուլում» աշխատության հեղինակ Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Իբրահիմ ալ-Հալաբին ապրել է 15-16-րդ դարերում /ծնվել է 864/1460 թ., մահացել՝ 956/1549 թ./: Մյուս կողմից, Մատենադարանում պահվող աշխատության՝ թիվ 1713 ձեռագիրը գրվել է հիջրայի Ռաջաբ ամսվա 1080 թ. (մ. թ. 1669 թ. նոյեմբեր ամսին), իսկ «Սաուդ թագավորի» համալսարանում պահվող ձեռագիրը՝ հիջրայի 1133 թ. (մ. թ. 1721թ.), ինչը նշանակում է, որ 17-18-րդ դարերը նույնպես ուսումնասիրվող թեմայի ժամանակագրության առանցքում են: Ատենախոսության մեջ անդրադարձ կա նաև բուն թեմային նախորդող և հաջորդող շրջաններին, քանի որ դրանք առնչվում են իսլամական իրավունքի ձևավորման, հետագա զարգացման ու իսլամական իրավական դպրոցների կայացման պատմությանը:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը: Աշխատանքի մեթոդաբանության հիմքում ընկած են պատմաքննադատական, պատմահամեմատական, տեքստաբանական և քննական վերլուծության մեթոդները: Պատմաքննադատական մեթոդը ներառում է սկզբնաղբյուրի համատեքստի վերլուծություն՝ հասկանալու համար հեղինակի կյանքը, ապրած ժամանակը, հեղինակի մոտեցումների վրա տարբեր գաղափարախոսությունների և միջավայրի ազդեցությունը: Տեքստաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալ աշխատասիրության ձեռագրերի, տվյալ դեպքում՝ նշված երկուսի առանձնահատկությունները, դրանց բնույթն ու բովանդակությունը պատմագրության, աղբյուրագիտության և միջդիսցիպլինար այլ գիտակարգերի տեսանկյունից: Պատմահամեմատական մեթոդն արաբատառ երկու հին ձեռագրի ուսումնասիրության համեմատական վերլուծությունն է, որի միջոցով վեր են հանվել նաև դրանց առանց-քային տարբերությունները: Քննական վերլուծությունը հնարավորություն է տվել ուսումնասիրել հանաֆիականությունը, ուղղության տեսաբաններին, մասնավորապես ալ-Հալաբիին՝ որպես իմամ-խատիբ, տեսաբան ու նորարար, ինչպես նաև

սկզբնաղբյուրը՝ «Ծովերի միաձուլում» աշխատասիրությունը՝ մուսուլմանական իրավունքի զարգացման ու տրամաբանության համատեքստում:

Ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը կարևոր ներդրում է ՀՀ-ում իսլամագիտության զարգացման առումով: Մեզանում առաջին անգամ հայերենի է թարգմանվել, ինչպես նաև համապարփակ կերպով ուսումնասիրվել Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābḥur» աշխատությունը և դրա ազդեցությունը հանաֆիական և, ընդհանրապես, իսլամական իրավական մտքի զարգացման հարցում: Որպես սկզբնաղբյուր օգտագործվել է Մատենադարանի արաբատառ ֆոնդի թիվ 1713 ձեռագիրը: Ուսումնասիրությունը կատարվել է պատմագրության, աղբյուրագիտության և իսլամագիտության տեսանկյունից: Աշխատանքի վերջնարդյունքը կարող է օգտակար լինել այն դասագրքերի ստեղծման մեջ, որտեղ անդրադարձ կա իսլամական իրավական դպրոցներին, այդ թվում՝ հանաֆիականությանն ու հանաֆիական սկզբնաղբյուրներին: Աշխատանքի հիմնական թեզերը կարող են կիրառվել նշված թեմայով դասախոսությունների պատրաստման մեջ, որոնց շահառուն նեղ մասնագիտական շրջանակներն են: Մյուս կողմից, աշխատանքը կարևոր է Մատենադարանում պահվող արաբատառ ձեռագրերի ուսումնասիրության և հանրահռչակման, ինչպես նաև հայ-արաբական բազմակողմ հարաբերությունների հետագա զարգացման տեսանկյունից:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնը, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի՝ գիտական պարբերականներում հրատարակած հոդվածներում: Ատենախոսության մեջ ընդգրկված տարբեր խնդիրներ ներկայացվել են նաև հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Աշխատանքը գրվել է սկզբնաղբյուրային և մասնագիտական նշանակություն ունեցող՝ արաբերեն, հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով գրականության հենքի վրա: Առաջնային սկզբնաղբյուր են դիտարկվել ուսումնասիրության հիմնական առարկա Իբրահիմ ալ-Հալաբիի «Ծովերի միաձուլում» («Multaqa al-Ābḥur») աշխատասիրության հիշատակված երկու ձեռագրերը: Ձեռագրերի կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունների վերլուծության համար կարևոր նշանակություն է ունեցել Սուքրու Սալիմ Հասի[1] ուսումնասիրությունը՝ նվիրված «Multaqa al-Ābḥur» աշխատությանը: Իսլամական իրավական համակարգի ձևավորման պատմության, իրավական դպրոցների մեթոդաբանական առանձնահատկությունների լուսաբանման և իրավական որոշումներ կայացնելու գործիքակազմի ուսումնասիրության և թեմայի ընդհանրացման տեսանկյունից մեծ կարևորություն են

[1] Selim H. Ş., "A Study of Ibrahim al-Halabi with Special Reference to the Multaqa", Ph.D. Diss., University of Edinburgh, 1981.

ունեցել Ն. Կիրաբայեվի[2], Ա. Բենիսոնի[3], Ն. Բադավիի[4], Վ. Հալլակի[5], Ի. Պետրուշևսկու[6], Ե. Ֆրոլովայի[7], Ա. Մյուլլերի[8], Ջ. Շախտի[9], Ռ. Դավիդի[10], Մ. Քամալիի[11], Լ. Սյուկիայնեի[12], Բ. Ուեյսի[13], Ջ. Մակդիսի[14], Ա. Շոյբի[15], Ալի Ալ-Կուտբի[16], Մուհամմադ Աբու Զահրայի[17], Մուհամմադ Աքրամ Նադվիի[18], Ռ. Բատիրի[19], Դ. Զաքարիասի[20] գրքերը, գիտական հոդվածներն ու վերլուծությունները:

Իսլամական իրավունքի ձևավորման պատմության ուսումնասիրման նպատակով կիրառվել է այդ ոլորտում առաջատար գիտնական Վաել Հալլաքի «Իսլամական իրավունքի ներածություն» աշխատությունը, որտեղ հեղինակը մանրամասն ուսումնասիրել է մուսուլմանական իրավունքին վերաբերող հարցեր: Աշխատության առաջին հատվածը նվիրված է իսլամական օրենքի ուսումնասիրմանը՝ դրա ձևավորման վաղ շրջանում: Հեղինակը բացատրում է իրավագետների դերը, որոնք հիմնավորում են օրենքը, և դատավորների ու արդարադատություն իրականացնող այլ մարմինների դերը՝ խոսելով այն մասին, թե ինչպես ստեղծվեցին տարբեր իրավական դպրոցներ, և թե ինչպես է բարոյական օրենքը գործել վաղ մուսուլմանական հասարակության մեջ: Գրքի երկրորդ մասը մեկնաբանում է, թե ժամանակի ընթացքում ինչպիսի փոփոխությունների է ենթարկվում իսլամական օրենքը:

Իսլամական իրավունքի ուսումնասիրման բնագավառում մեկ այլ ազդեցիկ գիտնական՝ Նեսրին Բադավին իր «Իսլամական իրավունքի ներածություն» գրքում

[2] Кирабаев Н. С., Политическая Мысль Мусульманского Средневековья, М., 2005.
[3] Bennison A. K., "The Great Caliphs: The Golden Age of the "Abbasid Empire", I.B. Tauris & Co. Ltd, London, 2009.
[4] Badawi N., Introduction to Islamic law, February 2009. https://landwise-production.s3.amazonaws.com/2022/03/Badawi_Introduction-to-Islamic-Law_2009.pdf
[5] Hallaq W. B., "An Introduction to Islamic Law", Cambridge University Press, 2009.
[6] Петрушевский И. П., Ислам в Иране в VII-XV веках, Л., 1966.
[7] Фролова Е. А., "История Средневековой Арабо-Исламской Философии", Российская Академия Наук, Институт философии, Москва, 2006.
[8] Мюллер А., "История Ислама: От Доисламской Истории Арабов до Падения Династии Аббасидов", "Издательство Астрель", Москва, 2004.
[9] Schacht J., "The Origins of Muhammadan Jurisprudence", Oxford, Clarendon Press, 1950.
[10] Жоффре Д. Р., Спинози к Основные Правовые Системы Современности (сравнительное право). - М., 1996.
[11] Kamali M. H., Fiqh and Adaptation to Social Reality, *The Muslim World*, 86 (1), 1996.
[12] Сюкияйнен Л. Р., Мусульманское Право. Вопросы, Теории и Практики. Москва, 1986.
[13] Weiss B., "Interpretation in Islamic Law: The Theory of Ijtihād." The American Journal of Comparative Law, vol. 26, no. 2, 1978.
[14] Makdisi G., "The Juridical Theology of Shâfi'ī: Origins and Significance of Uṣûl al-Fiqh." *Studia Islamica*, no. 59, 1984.
[15] Shoayb A., "The Development of Islamic Jurisprudence and Reasons for Juristic Disagreements among Schools of Law", University of South Africa, 2005.
[16] Али ал-Кутб М., "Основатели Четырех Мазхабов", "Диля", Москва-Санкт-Петербург, 2008.
[17] Abu Zahra M., "Imam Abu Hanifa: His life, Options and Fiqh", Maktabah Publications, 1945.
[18] Nadwi M. A., "Abu Hanifah: His Life, Legal Method and Legacy", Kube Publishing Ltd, Oxford, 2010.
[19] Батыр Р., Жизнь и Наследие Абу Ханифы, Часть 1. "Медиа", 2007.
[20] Zacharias D., "Fundamentals of the Sunnī Schools of Law", ZaöRV, 66, 2006. http://www.zaoerv.de/66_2006/66_2006_2_b_491_508.pdf

մանրամասն ուսումնասիրել է շարիաթը, ֆիկհը, իսլամական իրավունքի չորս դպրոցների մեթոդաբանությունն ու գործիքակազմը:

Իսլամագիտության ուսումնասիրման տեսանկյունից հայ գիտնականներից կարևոր նշանակություն է ունեցել արևելագետ Դավիթ Հովհաննիսյանի «Իսլամագիտություն» աշխատասիրությունը, որը վերաբերում է իսլամագիտության առանցքային հարցերին, այդ թվում՝ մազհաբներին:

Մուսուլմանական չորս իրավական դպրոցների պատմության ուսումնասիրման տեսանկյունից կարևոր նշանակություն է ունեցել Ալի ալ-Կուտբի «Չորս մազհաբների հիմնադիրները» գիրքը, որտեղ ներկայացվում է կրոնաիրավական չորս դպրոցների հիմնադիրների կյանքն ու գործունեությունը:

Իսթիհսանի հայեցակարգի և իթիքաֆի ծիսակարգի ուսումնասիրության համար շահեկան են եղել արաբ հեղինակներ՝ Ս. Կայադիբի[21], ալ-Շաֆիի[22], Շ. Իսհակի[23], Մ. Քամալի[24], Ռ. Պարետի[25], ալ-Ջուզեյրիի[26], ալ-Զուհեյլիի[27], Իբն Խալլաբի[28], Մանսուր ալ-Բահութիի[29], Զաքարիա ալ-Անսարիի[30], Հասան ալ-Շառնաբլալիի[31], Իբն Հաջար ալ-Հայսամի[32], Խալեդ ալ-Մուշայկահի[33], Բադր ալ-Դին ալ-Այնի[34] աշխատությունները: Տարբեր անհատների մասին ճշգրիտ տեղեկատվություն ստանալու համար օգտագործվել են մի շարք աղբյուրներ[35]՝ մասնավորապես մուսուլման նշանավոր իրավագետների կենսագրություններին առնչվող արաբական հանրագիտարաններ:

---

[21] Kayadibi S., The Formation of the Concept of Istihsan in Islamic Law *in Pool Finance Economic System: Law, Democracy, Alliance of Civilization*, Publisher: IIUM Press, Malaysia, 2011.

[22] أبو عبد الله محمد بن إدريس الشافعي، كتاب الأم، كتاب إبطال الاستحسان، دار الفكر – بيروت، عدد الأجزاء: ٨ (في ٥ مجلدات)، الجزء السابع، الطبعة: الثانية ١٤٠٣ هـ. .

[23] أبو إسحاق الشاطبي، الموافقات في أصول الشريعة، دار الكتب العلمية، بيروت – لبنان، الطبعة الأولى، 1425 هـ. .

[24] Kamali M. H., Principles of Islamic Jurisprudence, ITS 1991.
Kamali M. H., "Istiḥsān and the Renewal of Islamic Law." *Islamic Studies*, vol. 43, no. 4, 2004.

[25] Paret R., "Istiḥsān and Istiṣlāḥ", EI2 (Eng.), IV.

[26] عبد الرحمن الجزيري، كتاب الفقه على المذاهب الأربعة، الجزء الأول، منشورات محمد علي بيضون لنشر كتب السنة والجماعة، دار الكتب العلمية، بيروت – لبنان، الطبعة الثانية، 2003.

[27] وهبة بن مصطفى الزحيلي، الفقه الإسلامي وأدلته (الطبعة الرابعة)، سوريا: دار الفكر، الجزء الثالث، 1985.

[28] ابن الخَلَّاب، التفريع في فقه الإمام مالك بن أنس (الطبعة الأولى)، بيروت–لبنان: دار الكتب العلمية، الجزء الأول، 2007.

[29] منصور البهوتي، كشاف القناع على متن الإقناع، لبنان: دار الكتب العلمية، الجزء الثاني، 1983.

[30] زكريا الأنصاري، فتح الوهاب بشرح منهج الطلاب، سوريا: دار الفكر، الجزء الأول، 1994.

[31] حسن الشرنبلالي، مراقي الفلاح شرح نور الإيضاح (الطبعة الأولى)، سوريا: المكتبة العصرية، 2005.

[32] ابن حجر الهيثمي، المنهاج القويم شرح المقدمة الحضرمية (الطبعة الأولى)، لبنان: دار الكتب العلمية، 2000.

[33] خالد المشيقح، فقه الاعتكاف، الرياض: دار أصداء المجتمع للنشر والتوزيع، 1999.

[34] بدر الدين العيني، البناية شرح الهداية، لبنان – بيروت: دار الكتب العلمية، الجزء الرابع، الطبعة الأولى، 2000.

[35] أحمد بن محمد بن أبي بكر بن خلكان، وفيات الأعيان وأنباء أبناء الزمان، المجلد الخامس، دار صادر بيروت، 1977.

عبد القادر بن محمد بن محمد بن نصر الله بن سالم بن أبي الوفاء القرشي الحنفي محي الدين أبو محمد، الجواهر المضية في طبقات الحنفية، هجر للطباعة والنشر والتوزيع والإعلان، الجزء الأول، بدون تاريخ.

محمد بن سليمان، كتائب أعلام الأخيار من فقهاء مذهب النعمان المختار، مكتبة الأستاذ الدكتور محمد بن تركي التركي، مخطوطة، أصل هذه النسخة في المكتبة المحمودية، بالمدينة النبوية، بدون تاريخ.

Ս. Կայադիբիի «Իսթիհսան հասկացության ձևավորումն իսլամական իրավունքում» աշխատանքն ուսումնասիրել է իսթիհսանի զարգացման փոխակերպումները՝ հանգելով այն տեսակետին, որ այն վճռորոշ դեր է խաղացել իսլամական իրավունքի զարգացման հարցում:

Իսլամագիտական եզրույթների մեկնաբանության և թարգմանության համար հիմք են դարձել համապատասխան բառարանները[36]: Աշխատանքում որպես սկզբնաղբյուր են գործածվել իսլամի սուրբ գիրքը՝ Ղուրանը, ինչպես նաև ալ-Բուխարիի և ալ-Մուսլիմի՝ առավել արժանահավատ համարվող հադիսները: Նյութերի ձեռագրագիտական ուսումնասիրության մեթոդաբանության տեսանկյունից կարևոր նշանակություն են ունեցել միջազգային ձեռագրագիտության մեջ հեղինակավոր երկու հրատարակություն՝ Ֆ. Դեռոշի[37] և Ա. Գակեկի[38] գրքերը:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից և բառացանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տրված են ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ՀԱՆԱՖԻԱԿԱՆ ՄԱԶՀԱԲԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԻՐԱՎԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ», բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին գլխում քննության է ենթարկվում սուննիական կրոնաիրավական դպրոցների մեթոդաբանությունն ու առանձնահատկությունները, «Ուսուլ ալ-ֆիկհի» էությունը, հանաֆիականության

تقي الدين بن عبد القادر التميمي الداري الغزي المصري الحنفي، الطبقات السنية في تراجم الحنفية، دار الرفاعي للنشر والطباعة والتوزيع، الرياض، الجزء الأول، 1983.

علي بن سلطان محمد القاري، مناقب الإمام الأعظم أبي حنيفة النعمان، مطبعة مجلس دائرة المعارف النظامية – حيدر آباد الدكن – الهند، الطبعة الأولى، الجزء الثاني، 1336 هـ.

الإمام الحافظ أبي عمر يوسف بن عبد البر الأندلسي، الإنتقاء في فضائل الأئمة الثلاثة الفقهاء، مكتب الطبوعات الإسلامية بحلب، الطبعة الأولى، 1997.

خير الدين الزركلي، "الأعلام، قاموس تراجم"، دار العلم للملايين، 2002.

يحيى مراد، معجم تراجم أعلام الفقهاء، دار الكتب العلمية، بيروت – لبنان، الطبعة الأولى، 2004.

شمس الدين الذهبي، سير اعلام النبلاء، مؤسسة الرسالة، بيروت، الجزء الخامس، الطبعة الحادية عشرة، 1996.

حاجي خليفة، كشف الظنون، دار إحياء التراث العربي، بيروت – لبنان، المجلد الثاني، 1999.

حمد بن مصطفى بن خليل أبو الخير عصام الدين طاشْكُبْري زَادَهْ، الشقائق النعمانية في علماء الدولة العثمانية، دار الكتاب العربي – بيروت، 1975.

[36] معجم لسان العرب لابن المنظور .

معجم المصطلحات الإسلامية، بشّار بكّور، مجمع الفتح الإسلامي، دمشق – سورية، 2012.

[37] Déroche F., Islamic Codicology, An Introduction to the Study of Manuscripts in Arabic Script, Al-Furqān Islamic Heritage Foundation, London, 2005.

[38] Gacek A., The Arabic Manuscript Tradition, A Glossary of Technical Terms and Bibliography Supplement, Leiden-Boston, 2012.

զարգացումը, Աբու Հանիֆայի մեթոդի յուրահատկությունները, Աբու Հանիֆայի գիտական դպրոցի առաջխաղացումը և դրանում Իբրահիմ ալ-Հալաբիի ունեցած շոշափելի դերակատարությունը:

Առաջին ենթագլխում՝ «Սուննիական կրոնահիրավական դպրոցների՝ մազհաբների զարգացումը, տեսական և գործնական կողմերը. «Ուսուլ ալ-ֆիկհի» նշանակությունը», ուսումնասիրվել է մուսուլմանական իրավունքի էությունը, ֆիկհի և շարիաթի առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, ֆիկհի հիմքերը: Իսլամի համատեքստում ֆիկհ տերմինը նշանակում է իսլամական օրենքների ամբողջություն՝ ի վերուստ տրված Մուհամմադ մարգարեի հայտնությունների միջոցով, որը միաժամանակ արտացոլված է Ղուրանում և Սուննայում: Ֆիկհը և շարիաթը զուգահեռներ են, որոնք համախմբում և ձևավորում են իրավական դաշտի ամբողջ համակարգը: Եթե շարիաթը համարվում է անփոփոխ օրենք, որն ունի կարգավորող նորմեր, ինչպես նաև ազդեցություն հասարակության վրա, ապա ֆիկհը համարվում է շարիաթի նորմատիվ-իրավական մասը: Ֆիկհը իսլամի իրավական նորմերի տեսությունն է կամ իրավագիտությունը, որը սահմանում է հավատացյալի բազմակողմ պարտականություններն Ալլահի առաջ, ինչպես նաև այդ համատեքստում՝ մարդկային գործունեության տեսական և գործնական կողմերը: Օմայյանների կառավարման շրջանում՝ 7-8-րդ դարերում, սուննի ֆակիհների շրջանում ֆիկհի գիտակները սկսում են բաժանվել երկու մեծ խմբի: Արդյունքում առաջ եկան հակադիր երկու ուղղություններ: Դրանցից մեկի հետևորդները ներկայացնում էին ահլ ալ-հադիսը, որոնք կենտրոնանում էին առաջին հերթին Սուննայի վրա, իսկ մյուսները՝ ասհաբ ալ-ռայը, որոնք իրավական հարցերի լուծման ժամանակ՝ Ղուրանից և Սուննայից բացի, ընդունելի էին համարում նաև այլ մեթոդների կիրառումը: Ֆիկհի չորս հիմքերն են Ղուրանը, Սուննան, իջման և կիյասը: Ենթագլխում ներկայացված է մուսուլմանական իրավական դպրոցների ձևավորման ընթացքն ու որոշումների կայացման գործիքակազմը՝ հիմնական շեշտը դնելով մալիքիական, շաֆիիական և հանբալիական մազհաբների վրա: 8-9-րդ դարերում ահլ ալ-ռայի և ահլ ալ-հադիսի հետևորդների միջև անվերջ վեճերը և տարակարծությունները հանգեցրին վերոնշյալ կրոնահիրավական դպրոցների՝ մազհաբների առաջացմանը: Մադինայում և Քուֆայում, որոնք ժամանակի մուսուլմանական մտքի զարգացման կենտրոններն էին, մի շարք հայտնի մտածողներ համախմբվում էին հեղինակավոր աստվածաբան-իրավագետների շուրջ: Նրանք Ղուրանի ու հադիսների հիման վրա զարգացնում ու առաջ էին քաշում սեփական մոտեցումները, որոնք ձևավորում էին մեթոդները: Արդյունքում առաջացան բազմաթիվ կրոնահիրավական դպրոցներ և ուղղություններ, որոնցից ժամանակի ընթացքում միայն չորսը դարձան հիմնական և ընդունվեցին սուննիական իսլամի կողմից և շարունակում են գոյություն ունենալ մինչ օրս: Դրանցից առավել հայտնիներն են հանաֆիական, մալիքիական, հանբալիական և շաֆիիական մազհաբները:

Երկրորդ ենթագլխում՝ «Հանաֆիական մազհաբ. Աբու Հանիֆայի դերը դրա

ձևավորման և կայացման գործում», ներկայացվել են հանաֆիական մազհաբի ձևավորման նախադրյալները, դպրոցի հիմնադիր Աբու Հանիֆայի կյանքն ու գործունեությունը, կիրառված մեթոդաբանական առանձնահատկությունները, Աբու Հանիֆայի ու նրա աշակերտների թողած ժառանգությունը, մազհաբի հիմնական աղբյուրները, դրա հետագա զարգացումն ու ադապտացիան: Աբու Հանիֆան համարվում է մտահայեցողական իրավական համակարգի հիմնադիրը, որի մեթոդաբանական առանձնահատկությունները թույլ էին տալիս հանաֆիական մազհաբի իրավագետներին լուծում գտնել ցանկացած իրավիճակում: Աբու Հանիֆայի մեթոդի առանձնահատկությունն այն է, որ նա անձամբ էր կառուցում իր դատողությունները և իրավական կարգադրություններ՝ ֆեթվաներ էր արձակում՝ հիմնվելով նախ և առաջ Ղուրանի այաթների վրա, ապա մարգարեի Սուննայի և նրա զինակիցների հադիսների վրա: Նա առաջինն էր, ով սկսեց դասակարգել մուսուլմանական իրավունքը:

Երրորդ ենթագլխում՝ «Աբու Հանիֆայի գիտական դպրոցի ձևավորումը. Իբրահիմ ալ-Հալաբիի դերակատարությունը», ներկայացվել է Աբու Հանիֆայի և նրա դպրոցի ստեղծումը, ինչպես նաև հանաֆիականների գրական ժառանգությունը: Աբու Հանիֆան իրենից հետո թողել է ընդամենը մի քանի փոքրածավալ գրքույկներ, որոնք ընդհանրական տեսքով արտահայտում են ուսմունքի դրույթները և ընդհանուր աշխարհայեցական մտքեր: Աբու Հանիֆան իր ներդրումը կատարեց այլկերպ՝ աշակերտներին փոխանցելով իր գիտելիքը, որոնք այդ հենքի վրա մշակեցին ուսմունքը՝ դարձնելով այն իրավական գիտակարգ: Աբու Հանիֆայի աշակերտների մեծածավալ աշխատանքի և ջանքերի արդյունքում հաստատուն կերպով ձևավորվեց և զարգացավ հանաֆիական մազհաբը, որին վիճակված էր դառնալ ամենատարածված մազհաբներից մեկը: Հանաֆիների հիմնարար աշխատություններից է Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābḥur» աշխատությունը:

Իբրահիմ ալ-Հալաբիին հաջողվեց միավորել իսլամական իրավունքի՝ մինչ այդ իրարամերժ մի շարք թեզեր, որոնք ամփոփվեցին «Multaqa al-Ābḥur» աշխատության մեջ: Աշխատությունը մեծ ճանաչում բերեց հանաֆիական դպրոցին Օսմանյան կայսրության մեջ՝ ձեռք բերելով նաև դասագրքային նշանակություն: «Multaqa al-Ābḥur»-ը ստացավ նաև կանոնագրքի կարգավիճակ: Փոփոխվող սոցիալական պայմաններում այն հնարավորություն ընձեռեց օրենքը մեկնաբանել տարբեր դիտանկյուններից:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է ***«ԻԲՐԱՀԻՄ ԱԼ-ՀԱԼԱԲԻԻ «MULTAQA AL-ĀBḤUR» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԱՖԻԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ»:*** Այն բաղկացած է երեք ենթագլխից: Երկրորդ գլխում ուսումնասիրվում է հանաֆիական դպրոցի մեթոդաբանության ձևավորումը իսթիհսանի և իթիքաֆի օրինակով, ալ-Հալաբիի կյանքն ու գործունեությունը՝ որպես իմամ-խատիբ, ֆակիհ, տեսաբան ու նորարար: Գլխում մանրամասն ուսումնասիրվում և քննական վերլուծության է

ենթարկվում Իբրահիմ ալ-Հալաբիի ամենահայտնի՝ «Multaqa al-Ābḫur» («Ծովերի միաձուլում») աշխատությունը:

Առաջին ենթագլխում՝ «Հանաֆիական դպրոցի մեթոդաբանության ձևավորումն ու նշանակությունը իսլամական իրավունքի՝ ֆիկհի զարգացման տեսանկյունից (իսթիհսանի և իթիքաֆի օրինակով)», ուսումնասիրվել է իսթիհսանի հայեցակարգը, եզրույթի նշանակությունն ու հարմարեցումը սուննիական մազհաբներում՝ շեշտը դնելով հանաֆիական մազհաբի վրա: Իսթիհսանը անձնական կարծիքի ձև է, որը նախապատվությունը տալիս է գոյություն ունեցող մասնավոր խնդրի մի շարք լուծումներից լավագույնին: Այս առումով իսթիհսանը իսլամական իրավագիտության և մարդկային գիտելիքի անբաժանելի մասն է, ըստ որի խրթին և վիճելի հարցեր լուծելիս դիմելով համանմանության՝ կիյասի մեթոդին, առաջնորդվել մուսուլմանական համայնքին օգտավետ չափորոշիչներով՝ երկու հնարավոր տրամաբանական եզրահանգումներից ընտրել այն մեկը, որն առավել օգտակար կլինի մուսուլմանական համայնքի համար: Մանրամասն ուսումնասիրվել է նաև իթիքաֆի ծիսակարգն ու դրա կատարման պայմանների տարբերությունները սուննիական կրոնահիրավական մազհաբներում: Իթիքաֆը մզկիթում մեկուսի մնալու ծիսակարգն է, հատկապես երկրպագության համար: Իթիքաֆի ծիսակարգի երեք հիմունքներն են՝ մզկիթի առկայությունը, մենավոր անձը և մզկիթում նրա միայնության հանգամանքը: Այս ծիսակարգի իրականացման հարցերի վերաբերյալ սուննիական կրոնահիրավական չորս դպրոցի մոտեցումը տարբերվում է: Իթիքաֆից բխող է ինքնազսպվելու և աշխարհիկ հաճույքներից հրաժարվելու կարողության դրսևորումը, քանի որ իթիքաֆն այն իրականացնողին վարժեցնում է նվազեցնել աշխարհիկ որոշ թույլատրելի արարքներ և նվիրվել Ալլահի պաշտամունքին:

Երկրորդ ենթագլխում՝ «Իբրահիմ ալ-Հալաբին՝ հանաֆիական մազհաբի տեսաբան ու նորարար», մանրամասն ուսումնասիրվել է Իբրահիմ ալ-Հալաբիի կյանքն ու գործունեությունը, նրա ունեցած դերը հանաֆիականության զարգացման ու առաջխաղացման գործում, ինչպես նաև նրա հեղինակած աշխատությունները, որոնցում առանձնակի կարևորվում է հեղինակի «Multaqa al-Ābḫur» աշխատությունը: Ալ-Հալաբին իր համբավը, որպես ժամանակի լավագույն իրավագետ, ձեռք բերեց «Ծովերի միաձուլում» աշխատության շնորհիվ, որը դարձավ հանաֆիական իրավական դպրոցի հիմնական ձեռնարկներից և իսլամական իրավունքի ոլորտում ժամանակի լավագույն աշխատություններից մեկը:

Երրորդ ենթագլխում՝ «Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābḫur» աշխատության քննական վերլուծություն», ուսումնասիրության է ենթարկվել «Ծովերի միաձուլում» աշխատությունը, որը գրված է հանաֆիական կրոնաձիսական դասակարգման սկզբունքով: Աշխատասիրության հիմքում ընկած թեզերն այսօր էլ ունեն կիրառական նշանակություն թե՛ հանաֆիական, թե՛ կրոնահիրավական այլ

դպրոցների հետևորդների համար: Աշխատությունը լավագույնս արտահայտում է տասնվեցերորդ դարի մուսուլմանական իրավունքի հիմնական միտումները:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը կազմված է երեք ենթագլխից, կրում է ***«ԻԲՐԱՀԻՄ ԱԼ-ՀԱԼԱԲԻԻ «MULTAQA AL-ĀBḪUR» («ԾՈՎԵՐԻ ՄԻԱՁՈՒԼՈՒՄ») ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ (ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԵՎ ԹԱԳԱՎՈՐ ՍԱՈՒԴ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)»*** վերնագիրը: Գլխում ուսումնասիրվում է «Ծովերի միաձուլում» աշխատության կիրառական նշանակությունն ու դրա ադապտացիոն շրջափուլերը: Ի ցույց են դրվում փաստացի երկու տարբեր գրիչների ստեղծած ձեռագրերի տարբերությունները: Կատարվել է Մատենադարանի թիվ 1713 և «Սաուդ թագավոր» համալսարանի 6770 ձեռագրերի բովանդակությունների, մեկնաբանությունների և ծանոթագրությունների քննական և համեմատական վերլուծություն:

Առաջին ենթագլխում՝ «Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābḫur» աշխատության կիրառական նշանակությունն ու ադապտացիան», ուսումնասիրվել է վերոհիշյալ աշխատության գործնական նշանակությունն ու հետագա ադապտացիոն գործընթացները: Այն լայնորեն ուսուցանվում էր օսմանյան դպրոցներում որպես հանաֆիական իրավունքի հիմնական դասագիրք: Տասնյոթերորդ դարում աշխատությունը հիշատակվում է մի շարք աղբյուրներում՝ որպես դասագիրք: Հատուկ ուշադրության է արժանի «Multaqa»-ն՝ որպես Օսմանյան կայսրության իրավագիտության և դատական համակարգի գլխավոր տեղեկագիրք ևս: Նախքան «Multaqa»-ի ընդգրկումը դպրոցների ուսումնական ծրագրերում, ստեղծումից անմիջապես հետո այն ճանաչվեց որպես դատական համակարգի սկզբնաղբյուր և սկսեց օգտագործվել կադիների և մուֆթիների կողմից:

Երկրորդ ենթագլխում՝ «ՄՄ ձեռ. 1713 և ՍԹՀ 6770 ձեռագրերի համեմատական վերլուծություն», ուսումնասիրվել են «Ծովերի միաձուլում» աշխատության երկու ձեռագրերի (Մատենադարանի թիվ 1713 և «Սաուդ թագավոր» համալսարանի 6770) միջև առկա կառուցվածքային, բովանդակային և լեզվական տարբերությունները: Դրանք շատ չեն. հիմնական տարբերությունները օգտագործված բառերի և բառակապակցությունների, նաև՝ դրանց կիրառման հերթականության մեջ են, որոնք, սակայն, որևէ ազդեցություն չեն ունենում ձեռագրի բուն բովանդակության վրա:

Երրորդ ենթագլխում՝ «Ձեռագրերում առկա մեկնաբանությունների և ծանոթագրությունների համեմատություն», ներկայացված են ինչպես երկու ձեռագրի լուսանցքներում առկա մեկնաբանությունների ու ծանոթագրությունների համեմատական վերլուծությունը, այնպես էլ հավելվածներ ձեռագրերից արված լուսանկարներից: Ուսումնասիրման առարկա երկու ձեռագրերի մեկնություններ կատարողները անդրադարձել են տարբեր հարցերի՝ սկսած լեզվական որոշակի հիմնախնդիրներից մինչև բուն տեքստին վերաբերող հատվածներ, ներկայացրել են բնագրի իրենց տարբերակը, այլ կերպ ասած՝ տեքստի սեփական ընկալումը:

Այնուհետև ներկայացվում են աշխատության մի շարք գլուխների հայերեն թարգմանությունը, որոնց ընտրությունը պայմանավորված է ատենախոսության հավելված բաժնում զետեղված համապատասխան նկարների հետ:

Եզրակացություն: Աշխատանքի ավարտին հանգել ենք հետևյալ եզրահանգումների.

1. «Ծովերի միաձուլում» աշխատությունն աչքի է ընկնում իր հակիրճ ձևակերպումներով և ոչ խրթին՝ պարզ ոճով: Պարունակում է դրույթներ, որոնք վերաբերում են մարդու գործունեության գրեթե բոլոր ոլորտներին, ներառյալ՝ երկրպագություն, ընտանեկան հարաբերություններ, ժառանգություն, առևտրային գործարքներ, հանցագործություններ և այլն: Աշխատանքը բավականին կարճ ժամանակահատվածում ընդունվեց իսլամական իրավունքի ոլորտում:
2. Իբրահիմ ալ-Հալաբիի աշխատության ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանում հանդուրժողական մոտեցմամբ են ներկայացված ֆիկհին վերաբերող մի շարք հարցեր, որոնց ամբողջական և համապարփակ լուծումները շատ դեպքերում մշակվել են իսլամական իրավունքի մյուս ուղղություններից վերցված թեզերի համադրմամբ: Ալ-Հալաբին անհրաժեշտության դեպքում թույլատրում էր հանաֆիական ուղղությանը չպատկանող ծեսերի իրականացումը՝ հղում կատարելով մյուս դպրոցների գիտնականներին: Շատ դեպքերում նրան հաջողվեց համադրել իսլամական իրավունքի իրարամերժ թեզեր, ինչը տվյալ ժամանակաշրջանի համար եզակի և համարձակ մոտեցում էր: Դա է պատճառը, որ ոչ հանաֆիական ուղղությունների ներկայացուցիչները ևս լայնորեն կիրառում էին ալ-Հալաբիի ներդրած մոտեցումները: «Ծովերի միաձուլում» աշխատասիրության մյուս առանձնահատկություններից է այն, որ դրա հեղինակն օգտագործել է կրոնական և իրավական եզրույթներ, որոնք չեն օգտագործել իր նախորդները:
3. Իբրահիմ ալ-Հալաբին նորարար է: Նրա «Multaqa al-Ābḥur» աշխատությունն առաջ քաշեց մի շարք դրույթներ, որոնք հարստացրեցին ոչ միայն հանաֆիական, այլև իսլամական իրավական միտքը տեսական ու գործնական միանգամայն նոր մոտեցումներով: Այս հանգամանքով պայմանավորված ալ-Հալաբիի աշխատասիրությունը հետզհետե ավելի արժևորվեց և դարձավ դպրոցական դասագիրք Օսմանյան կայսրության շրջանում կրոնական ուղղվածություն ունեցող կրթական հաստատություններում: Ալ-Հալաբիի մոտեցումները ժամանակի ընթացքում ձևավորեցին այն հենքը, որը դարձավ հանաֆիական մտքի զարգացման ուղենիշներից մեկը:
4. Նրա աշխատասիրությունը ձեռք բերեց դասագրքային և մեթոդական կարևորագույն նշանակություն, դարձավ մի շարք օրենսդրությունների հենքը: 1877թ. Օսմանյան կայսրությունում հրապարակված քաղաքացիական օրենսգրքի՝ Մեջելի հիմքում ընկած է «Multaqa al-Ābḥur» աշխատասիրությունը, ինչը վերստին

փաստում է իսլամական իրավունքի զարգացման վրա վերջինիս ունեցած ազդեցության մասին:
5. Ալ-Հալաբին սոսկ տեսաբան չէր: Նա գործնական՝ ուղիղ շփում ուներ իսլամական միջավայրի հետ: Երկար տարիներ եղել է իմամ-խատիբ՝ ծառայելով տարբեր մզկիթներում, որոնցից ամենահայտնին Ստամբուլի Սուլթան Մուհամմադ ալ-Ֆաթիհն էր: Ալ-Հալաբին իր հերթին կրել է Օսմանյան կրոնական միջավայրի ազդեցությունը, որը խոր հետք է թողել նրա աշխարհընկալման ձևավորման վրա:
6. Հատկանշական է, որ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābḥur» աշխատանքի ձեռագրերի մի ամբողջ հավաքածու կա Մաշտոցի անվան Մատենադարանում, ինչը նշանակում է, որ աշխատանքն աշխարհագրական առումով մեծ տարածում է ստացել: Մեր կողմից ուսումնասիրված ձեռագրերում առկա են հետևյալ առանձնահատկությունները.
   - Թիվ 1713 ձեռագիրը բաղկացած է երկու հարյուր քսաներկու, իսկ 6770 ձեռագիրը՝ հարյուր երեսունութ թերթից:
   - Առաջին ձեռագրի սկզբնամասը պատկերված է բուսական տարրերով, սակայն երկրորդ ձեռագրի նույն հատվածում որևէ բուսական տարր չկա:
   - Առաջին ձեռագրի բուն տեքստն առնված է ոսկի և սև գույների եզրագծերի մեջ (դա վկայում է ձեռագրի համակարգվածության մասին), սակայն երկրորդը գրված է առանց եզրագծերի և առկա է տեքստի հաջորդական շարադրում:
   - Առաջին ձեռագրի էջի չափերն են 15,8*9,5 սմ, գրադաշտի չափերը՝ 11,5*5,5 սմ, մինչդեռ երկրորդ ձեռագրի էջի չափերն են 20,5*16 սմ, իսկ գրադաշտի չափերը նշված չեն:
   - Առաջին ձեռագրում դատարկ էջերը հինգն են, երկրորդ ձեռագրում՝ վեցը:
   - Առաջինում առկա է հինգ կնքադրոշմ, երկրորդ ձեռագրում՝ մեկ:
   - Երկու ձեռագրերի միջև կա բովանդակության ցանկի տարբերություն՝ կապված գրելաոճի հետ: Դրանից զատ առաջին ձեռագրի բովանդակության ցանկի էջերի համարակալումը համընկնում է տեքստում դրանց համարակալման հետ, սակայն երկրորդ ձեռագրում այդ համարակալումը խախտված է տեքստում և մեկը մյուսի հետ չի համընկնում:
   - Ձեռագրերի բովանդակության ցանկերում կան տարբերություններ գլուխների բաժանման առումով: Առաջին ձեռագրի բովանդակության ցանկի գլուխների, ենթագլուխների և ենթաբաժինների վերնագրերը՝ ի տարբերություն երկրորդ ձեռագրի, առավել ընդարձակ են, ինչն էլ նպաստում է դրանց միջոցով բովանդակության մասին ավելի շատ գաղափար կազմել:
   - Երկրորդ ձեռագրի բովասնդակության ցանկը պատկերված է կարմիր եզրագծեր ունեցող հավասար վանդակներով, որոնք իրենց ներսում բովանդակում են թեք երկարաձիգ ձևով ու սև գույնով գրված գլուխների, ենթագլուխների ու ենթաբաժինների վերնագրեր: Ի տարբերություն երկրորդ ձեռագրի, առաջին ձեռագրի բովանդակության ցանկն առնված է սև և ոսկի շրջանակի մեջ, գլուխների վերնագրերը

գրված են կարմիր թանաքով, ենթագլուխներինն ու ենթաբաժիններինը՝ սև, իսկ էջերի համարները՝ կարմիր թանաքով:

Ձեռագրերի միջև առկա են հետևյալ կառուցվածքային նմանությունները.

▪ Առաջին ձեռագրի գրությունը սև թանաք, գլուխների վերնագրերը՝ կարմիր: Ինչ վերաբերում է երկրորդ ձեռագրին, ապա այն ևս գրված է սև թանաքով, իսկ գլուխների վերնագրերը գրված են կարմիր թանաքով:

▪ Երկու ձեռագրերում էլ կան կապող բառեր:

▪ Գրված են նասխ ձեռագրատեսակով:

Ձեռագրերի միջև առկա բովանդակային տարբերությունները.

Երկու ձեռագրերի բովանդակությունը թեև նույնն է, այնուամենայնիվ, դրանք ուսումնասիրելիս մենք հանգել ենք հետևյալ եզրահանգման.

▪ Բովանդակությունը երկու ձեռագրերում էլ նույնն է, թեպետ առկա են հավելյալ բառեր, բառակապակցություններ, միևնույն բառի հոմանիշային տարբերակներ, բառերի ու բառակապակցությունների կիրառման հերթագայության տարբերություններ, սակայն դրանից բուն տեքստի իմաստը չի փոխվում:

▪ Ձեռագրերում արված մեկնաբանությունների տարբերությունները.

Ձեռագրերի միջև տարբերությունները շոշափելի են մեկնաբանություններում, դրանք կատարողներից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանել տեքստի բովանդակությունը և որոշ դեպքերում այս կամ այն հարցի շուրջ հանաֆիական մազհաբի խոշոր իրավագետների կարծիքներին հավելել է սեփական տեսակետները:

Հավելվածում ներկայացված են երկու ձեռագրերից առանձնացված որոշակի գլուխների և ենթագլուխների նկարներ: **Բառացանկում** առանձին ներկայացված ու բացատրված են մուսուլմանական իրավունքի եզրույթներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Հակոբյան Վ., Հանաֆիական մազհաբի առանձնահատկությունները սուննիական կրոնաիրավական դպրոցների համատեքստում - Մերձավոր Արևելք. Պատմություն, Քաղաքականություն, Մշակույթ, 14-րդ հոդվածների ժողովածու, Երևան , 2019, 1, էջ 82-90:
2. Հակոբյան Վ., Իսթիհսանը սուննիական մազհաբներում և դրա ադապտացիան - Արևելագիտության հարցեր, 2019, 16, էջ 23-34:
3. Hakobyan V., Ibrahim Al-Halabi and "The Confluence of the Seas" Work - Scientific Artsakh, 2020, №3 (6), pp. 149-155.
4. Հակոբյան Վ., Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի 1713 և Սաուդ Թագավոր համալսարանի 6770 ձեռագրերի համեմատական բնութագիրը - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (ներկայումս՝ Բանբեր արևելագիտության ինստիտուտի), 2020, 33 (1), էջ 474-488:
5. Հակոբյան Վ., Ի ʿtikāf-ի ծիսակարգն ըստ սուննի կրոնաիրավական մազհաբների - Գիտական Արցախ, 2020, №4 (7), էջ 93-103:
6. Հակոբյան Վ., Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի արաբատառ ֆոնդի թիվ 1713 և Սաուդ թագավոր համալսարանի թիվ 6770 ձեռագրերում առկա մեկնաբանությունների և ծանոթագրությունների համեմատական բնութագիրը - Գիտական Արցախ, 2021, №1 (8), էջ 136-143:
7. Հակոբյան Վ., Ալ-Շաֆիին՝ մուսուլմանական իրավական ուսմունքի հիմնադիր. Ուսուլ ալ-ֆիկհի (uṣūl al-fiqh) ձևավորումը - Արևելագիտության հարցեր հ. 24, Երևան, 2023, էջ 106-116:

АКОПЯН ВАГЕ АКОПОВИЧ

ВЛИЯНИЕ ПРОИЗВЕДЕНИЯ ИБРАГИМА АЛЬ-ХАЛАБИ «МУЛТАКА АЛЬ-АБХУР» («СЛИЯНИЕ МОРЕЙ») НА ИСТОРИЮ РАЗВИТИЯ ХАНАФИТСКОЙ ШКОЛЫ РЕЛИГИОЗНОГО ПРАВА: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ РУКОПИСЕЙ

Диссертация на соискание учёной степени кандидата исторических наук по специальности 07.00.05 – «Историография, источниковедение».

Защита состоится 16 декабря 2024 года в 14:00 на заседании специализированного совета 006 «Всемирная история» КВОН РА, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Основной целью данной диссертации является изучение рукописных вариантов произведения «Мултака аль-Абхур» («Слияние морей»), написанных двумя разными авторами — известным представителем ханафитского мазхаба, видным мусульманским факихом Ибрагимом ибн Мухаммадом ибн Ибрагимом аль-Халаби.

Диссертация состоит из введения, трёх глав с соответствующими подразделами, заключения, списка использованных источников и литературы, приложения и глоссария.

Во введении обоснована актуальность исследования, сформулированы его цели и задачи, представлена научная новизна, определены хронологические рамки и методологическая основа исследования, а также проанализированы использованные источники и литература.

Первая глава, «ХАРАКТЕРИСТИКА ХАНАФИЙСКОГО МАЗХАБА В КОНТЕКСТЕ СУННИТСКИХ РЕЛИГИОЗНО-ПРАВОВЫХ ШКОЛ», состоит из трёх подразделов. В ней рассматриваются методология и особенности суннитских религиозно-правовых школ, сущность «усуль аль-фикх», развитие ханафитского учения, особенности метода Абу Ханифы, а также роль, которую сыграл Ибрагим аль-Халаби в развитии научной школы Абу Ханифы.

Вторая глава диссертации называется «ЗНАЧЕНИЕ И ВЛИЯНИЕ ПРОИЗВЕДЕНИЯ ИБРАГИМА АЛЬ-ХАЛАБИ «МУЛЬТАКА АЛЬ-АБХУР» В РАЗВИТИИ ХАНАФИТСКОГО МАЗХАБА». Она состоит из трёх подразделов. В данной главе рассматриваются процесс формирования методологии ханафитского мазхаба на примере таких концептов, как истихсан и итикаф, а также жизнь и деятельность аль-Халаби как имама-хатиба, правоведа, теоретика и новатора. Особое внимание в главе уделяется самому известному произведению Ибрагима аль-Халаби — «Мултака аль-Абхур» («Слияние морей»), которое подвергается детальному изучению и экспертному анализу.

Третья глава диссертации называется «ИЗУЧЕНИЕ РУКОПИСЕЙ ПРОИЗВЕДЕНИЯ ИБРАГИМА АЛЬ-ХАЛАБИ «МУЛЬТАКА АЛЬ-АБУР» («СЛИЯНИЕ МОРЕЙ») (НА ПРИМЕРЕ РУКОПИСЕЙ МАТЕНАДАРАНА И УНИВЕРСИТЕТА КОРОЛЯ САУДА». Глава состоит из трёх подразделов. В ней рассматривается прикладное значение произведения «Слияние морей», циклы его адаптации, а также проводится изучение и сравнительный анализ содержания, комментариев и аннотаций рукописей № 1713, хранящихся в Матенадаране, и № 6770, хранящихся в Университете короля Сауда, написанных двумя разными авторами.

В заключении подведены итоги проведённой работы и сформулированы основные выводы исследования. **В глоссарии** приведены и объяснены термины мусульманского права. **В приложении** представлены изображения отдельных глав и подразделов, выделенных из двух рукописей.

VAHE HAKOB HAKOBYAN

THE INFLUENCE OF IBRAHIM AL-HALABI'S "MULTAQA AL-ĀBḤUR" ("MERGING OF THE SEAS") WORK ON THE HISTORY OF THE DEVELOPMENT OF THE HANAFI RELIGIOUS SCHOOL OF LAW: COMPARATIVE ANALYSIS OF MANUSCRIPTS

The dissertation is submitted in pursuit of the degree of Candidate of Historical Sciences in the field of "Historiography, Bibliography" 07.00.05.

The defense of the dissertation will take place on December 16, 2024, at 14:00 during the session of the Specialized Council 006 on World History at the Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia, located at 24/4 Marshal Baghramyan Avenue, Yerevan, 0019.

SUMMARY

The thesis is dedicated to the study of manuscript versions of the work Multaqa al-Ābḥur ("The Merging of the Seas"), written by two different authors, of the famous Hanafi scholar and prominent Muslim faqīh Ibrahim ibn Muhammad ibn Ibrahim al-Halabi. The dissertation consists of an introduction, three chapters with corresponding subchapters, a conclusion, a list of sources and references, an appendix, and a glossary.

In the introduction, the significance and relevance of the study are justified, its goals and objectives are outlined, the scientific novelty is presented, and the chronological framework and methodological foundation are defined. Additionally, the sources and literature used in the study are analyzed.

The first chapter, titled "THE CHARACTERISTICS OF THE HANAFI MAZHAB IN THE CONTEXT OF SUNNI SCHOOLS OF RELIGIOUS LAW", consists of three subchapters. This chapter examines the methodology and distinctive features of Sunni religious and legal schools, the essence of Usul al-Fiqh, the development of Hanafi thought, the peculiarities of Abu Hanifa's method, the advancement of Abu Hanifa's scholarly school, and the significant role played by Ibrahim al-Halabi in this development.

The second chapter of the dissertation is entitled "THE SIGNIFICANCE AND INFLUENCE OF IBRAHIM AL-HALABI'S WORK "MULTAQA AL-ĀBḤUR" IN THE THE DEVELOPMENT OF THE HANAFI SCHOOL". It consists of three subchapters. This chapter examines the formation of the Hanafi school's methodology through the examples of Istihsan and Itikaf, as well as al-Halabi's life and work as an imam-khatib, jurist, theorist, and innovator. The chapter also provides a detailed study of Ibrahim al-Halabi's most famous work, Multaqa al-Ābḥur ("Merging of the Seas"), subjecting it to an in-depth analytical examination.

The third chapter of the dissertation is entitled "STUDY OF THE MANUSCRIPTS OF IBRAHIM AL-HALABI'S WORK "MULTAQA AL-ĀBḤUR" ("MERGING OF THE SEAS") (USING THE MANUSCRIPTS OF MATENADARAN AND KING SAUD UNIVERSITY AS EXAMPLES)".

The chapter consists of three subchapters. It examines the applied significance of Multaqa al-Ābḥur, its cycles of adaptation, and provides a comparative analysis of the content, annotations, and comments in two manuscripts: manuscript 1713, stored at Matenadaran, and manuscript 6770, held at King Saud University. Both manuscripts, written by different authors, are studied in detail.

The conclusion summarizes the key findings of the thesis. **The glossary** provides definitions and explanations of terms related to Muslim law. **The appendix** includes images of selected chapters and subchapters from the two manuscripts.